

1.4.2. Բնակչության դրամական եկամուտներ և ծախսեր, աշխատավարձ և այլ եկամուտներ

Բնակչության դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը: Բնակչության դրամական եկամուտները 2001թ. հունվար-փետրվարին կազմել են 90005.2 մլն.դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել են 13.5 %-ով: Դրամական ծախսերը նույն ժամանակաշրջանում կազմել են 100412.0 մլն.դրամ և ավելացել 16.6 %-ով:

Բնակչության դրամական եկամուտների ընդհանուր ծավալից 2001թ. հունվար-փետրվարին ապրանքների գնման և ծառայությունների վճարման համար բնակչությունը ծախսել է 79882.4 մլն.դրամ (88.8%), պարտադիր վճարումների և կամավոր մուծումների վճարման համար՝ 3935.6 մլն.դրամ (4.4%), ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճը կազմել է 9358.9 մլն.դրամ (10.4%):

Դրամական եկամուտների օգտագործման կառուցվածքում 2001թ. հունվար-փետրվարին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ սպառողական ծախսերի տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով, իսկ ավանդների և արժեթղթերի ձևով խնայողությունների հավելաճի տեսակարար կշիռն աճել է 4.3 տոկոսային կետով:

Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները: Բնակչության իրական տնօրինվող դրամական եկամուտները (եկամուտները հանած պարտադիր վճարումները, հաշվի առած ապրանքների և ծառայությունների սպառողական գների ինդեքսների փոփոխությունները) 2001թ. հունվար-փետրվարին 2000թ. հունվար-փետրվարի նկատմամբ աճել են 11.1 %-ով:

Աշխատանքի վարձատրություն: 2001թ. հունվար-փետրվարին, ըստ յուրաքանչյուր ամիս վիճակագրական հաշվետվություն ներկայացնող մոտ 9 հազար սուբյեկտների հաշվետվությունների նախնական տվյալների գնահատման, զբաղվածների միջին անվանական աշխատավարձը կազմել է 21748 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 12.3%: Ընդ որում, բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը, որի գնահատումը կատարվել է մոտ 4 հազար բյուջետային կազմակերպություններից ստացվող եռամսյակային հաշվետվությունների օպերատիվ տվյալների հիման վրա, կազմել է 14145 դրամ և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավելացել 13.8%, իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում զբաղվածներինը համապատասխանաբար՝ 28224 դրամ և 14.5 %:

2001թ. հունվարին անվանական միջին աշխատավարձի փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ և տատանումն ըստ տնտեսության ճյուղերի

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ
Ընդամենը	21672	100	112.1
Արդյունաբերություն	31234	144.1	122.6
Գյուղատնտեսություն	14110	65.1	117.4
Անտառտնտեսություն	11122	51.3	116.2
Տրանսպորտ	32349	149.3	104.3
Կապ	40898	188.7	97.1
Շինարարություն	40142	185.2	115.5
Առևտուր, հանրային սնունդ	9803	45.2	131.5
Բնակարանային-կոմունալ տնտեսություն, կենցաղսպասարկում	24289	112.1	117.3

	Անվանական միջին աշխատավարձը, դրամ	Տոկոսներով ընդամենի նկատմամբ	Տոկոսներով նախորդ տարվա նկատմամբ
Հաշվողական տեղեկատվական սպասարկում	17469	80.6	108.2
Առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն	13361	61.7	105.2
Կրթություն	12880	59.4	126.6
Մշակույթ	10222	47.2	106.9
Արվեստ	10492	48.4	99.7
Գիտություն և գիտական սպասարկում	18734	86.4	119.4
Վարկավորում և ապահովագրու-թյուն	66966	309.0	122.1
Կառավարման ապարատ	33718	155.6	121.2
Այլ	23353	107.8	103.5

2001թ. հունվարին սոցիալական ոլորտի ճյուղերում զբաղվածների անվանական միջին աշխատավարձը տատանվել է ընդհանուր միջինի 47.2 (մշակույթ) 61.7 (առողջապահություն և սոցիալական ապահովություն) տոկոսի սահմաններում: Անվանական միջին աշխատավարձը զգալիորեն բարձր է հատկապես վարկավորման համակարգում՝ ընդհանուր միջինը գերազանցել է 3.1 անգամ, կապի համակարգում և շինարարության մեջ՝ 1.9, կառավարման համակարգում՝ 1.6, տրանսպորտում՝ 1.5, արդյունաբերության մեջ՝ 1.4, բնակարանային-կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղսպասարկման և տնտեսության այլ ճյուղերում՝ 1.1 անգամ.